

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«ՀԵՆ Սննդամթերքի անվտանգության ոլորտի
ռիսկերի գնահատման և վերլուծության
գիտական կենտրոնի

տնօրեն՝



S.Հ.Մարկոսյան

«10» հունվարի 2024թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Առաջատար կազմակերպության

Ռոզա Էդիկի Բարսեղյանի «Ճագարների էյմերիոզի հարուցիչների
բազմազանությունը և համաճարակաբանությունը Հայաստանում»
ատենախոսության վերաբերյալ, ներկայացված կենսաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման Գ.00.08 -
«Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ

Ճագարաբուծությունը արդյունաբերական անասնաբուծության կարևոր
ճյուղերից է, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում
համեմատաբար ցածր ծախսերով ստանալ արժեքավոր մսամթերք:
Գյուղատնտեսական այլ կենդանիների համեմատ, ճագարի միսը պարունակում է
մեծ քանակությամբ հեշտ յուրացվող լիարժեք սպիտակուցներ և քիչ քանակությամբ
խոլեստերին: Էյմերիոզը (կոկցիդիոզը) ճագարների ամենատարածված
մակաբուծային հիվանդություններից է, որը մեծ վնաս է հասցնում
ճագարաբուծական տնտեսություններին:

Հայաստանում ճագարների էյմերիոզի ուսումնասիրումը ունի կարևոր
նշանակություն, ինչը պայմանավորված է վարակվածության բարձր ցուցանիշով,
սակայն այդ հարցին նվիրված աշխատանքները բավական քիչ են:

Այդ առումով Ռոզա Էդիկի Բարսեղյանի «Ճագարների էյմերիոզի
հարուցիչների բազմազանությունը և համաճարակաբանությունը Հայաստանում»

թեմայով ատենախոսությունը արդիական է և ունի կարևոր գիտա-գործնական նշանակություն:

Ռ. Է. Բարսեղյանի ատենախոսության նպատակն է հանդիսացել բացահայտել Հայաստանում ճագարների էյմերիաների բազմազանությունը և համաճարակային առանձնահատկությունները: Այս նպատակին հասնելու համար հեղինակը ուսումնասիրել է հետևյալ հարցերը՝

- Բացահայտել Հայաստանում ճագարների էյմերիոզի հարուցիչների տեսակային կազմը;
- Պարզաբանել է Հայաստանի լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիներում ճագարների էյմերիոզի հարուցիչներով վարակվածության էքստենսիվության և ինտենսիվության կախվածությունը տարիքից և սեզոնից;
- Ուսումնասիրել է լաբորատոր պայմաններում էյմերիաներով վարակված տարբեր ցեղերի ճագարների վարակվածության ցուցանիշները;
- Բացահայտել է հիվանդ ճագարների արյան հիմնական ցուցանիշները;
- Պարզել է կերի դերը և ազդեցությունը էյմերիոզի հարուցիչներով վարակվածության ժամանակ:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ Հայաստանի լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիներում առաջին անգամ հեղինակի կողմից բացահայտվել է ճագարների էյմերիաների տեսակային կազմը և արձանագրվել են *Eimeria exigua* և *E.coecicola* տեսակները, ուսումնասիրվել է ճագարների էյմերիաներով վարակվածության էքստենսիվության և ինտենսիվության կախվածությունը տարիքից և սեզոնից, պարզաբանվել են էյմերիոզի հարուցիչներով վարակված ճագարների արյան ձևաբանական ցուցանիշները, փորձարկվել է կենդանիների էյմերիոզով վարակվածության վրա հիգիենիկ պայմանների բարելավման հետ զուգահեռ համակցված կերի օգտագործման արդյունավետությունը:

Ռ.Է. Բարսեղյանի թեկնածուական ատենախոսությունը ներկայացված է համակարգչային տեքստի 115 էջի վրա: Աշխատանքը կազմված է ներածությունից, գրական ակնարկից, սեփական հետազոտությունների 3 գլուխներից,

եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:
Աշխատանքը ներառում է 25 աղյուսակներ, 42 նկար:

Աշխատանքի ներածությունում հիմնավորվում է ուսումնասիրման համար ընտրված գիտական թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի փորձահավաստիությունը և հրապարակումները, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության գրականության ակնարկ գլուխը ընդգրկում է 4 ենթագլուխ: Այս բաժնում հեղինակի կողմից ամփոփվել է 221 հայազգի և օտարազգի հեղինակների գիտական հետազոտության տվյալներ: Այստեղ ներկայացված են տվյալներ Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական նկարագրի, Հայաստանում ճագարների գլխաքանակի և պահման տեխնոլոգիաների, ճագարների հիմնական մակարուծային հիվանդությունների, էյմերիոզի ախտածնության և տարածվածության վերաբերյալ:

Ատենախոսության սեփական հետազոտությունների բաժինը ներառում է հետազոտության նյութը և մեթոդները գլուխը, սեփական հետազոտությունների արդյունքների գլուխը, որը իր հերթին բաժանված է 2 ենթագլուխների՝ էյմերիոզի համաճարակաբանությունը և ախտորոշումը ու կլինիկական հետազոտություն, որոնք իրենց հերթին բաժանված են ենթագլուխների:

Հետազոտությունների արդյունքում հեղինակը հայտնաբերել է ճագարների էյմերիաների 6 տեսակ՝ *E. Magna*, *E. Media*, *E. Perforans*, *E. Irresidua*, *E. Exigua*, *E. Coecicola*, որոնցից ամենաբարձր հանդիպման հաճախականությունն է ունեցել է *E. irresidua* տեսակը (40-98%): Հայաստանի նախալեռնային գոտում հանդիպել է նաև *E. stiedai* տեսակը: *E. exigua* և *E. coecicola* տեսակները Հայաստանում նշվել են առաջին անգամ:

Ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը պարզել է, որ մատղաշ ճագարների վարակվածության էքստենսիվության ցուցանիշը անկախ սեզոնից եղել են բարձր (74.47-100%): Հասուն ճագարների մոտ վարակվածության

էքստենսիվության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է աշնանը (100%), իսկ ամենացածրը՝ ձմռանը (61,54%): Նախալեռնային և լեռնային գոտիներում տարվա տարբեր սեզոններին վարակվածության ինտենսիվության փոփոխություններ չեն գրանցվել, իսկ հարթավայրային գոտում վարակվածության ինտենսիվությունը գարնան-ամռան ամիսներին աճել է:

Ատենախոսը պարզել է նաև, որ էյմերիոզի հարուցիչներով ինտենսիվ վարակման ժամանակ հսկա և կալիֆորնիական ցեղի ճագարների արյան հետազոտված բոլոր ձևաբանական ցուցանիշները փոփոխվել են՝ էրիթրոցիտների, հեմոգլոբինի, ցուպիկակորիզավոր նեյտրոֆիլների, լեյկոցիտների, լիմֆոցիտների և մոնոցիտների քանակները նվազել են, իսկ հատվածակորիզավոր նեյտրոֆիլների, էոզինոֆիլների քանակները և էրիթրոցիտների նստեցման արագությունը՝ աճել:

Կատարված փորձարկումների արդյունքում, Ռ.Է. Բարսեղյանը եկել է նաև այն եզրակացության, որ հիմնական գործոնը, որն ազդում է ճագարների էյմերիաներով վարակվածության ինտենսիվության վրա դա կերն է ու կենդանիների պահման պայմանները: Եղվարդի «ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ» ՍՊԸ գործարանի համակցված կերի գրանուլներով կերակրման և խնամքի ճիշտ կազմակերպման դեպքում վարակվածության ինտենսիվությունը նվազել է:

Ռ.Է. Բարսեղյանի թեկնածուականատենախոսությունը ավարտվում է հետազոտության եզրակացություններով, օգտագործված գրականության ցանկով և 2 հավելվածով:

Քննարկվող աշխատանքում ձևակերպված գիտական դրույթները համապատասխանում ենատենախոսության նպատակներին ու խնդիրներին և հետևում են կատարված ուսումնասիրությունների և փորձերի արդյունքներից:

Աշխատանքի հիմնական արդյունքները հրապարակված են 11 գիտական աշխատանքում: Ներկայացվածատենախոսությունը, սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտահայտում ենատենախոսության հիմնական դրույթները և եզրակացությունները:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել ճագարաբուծական տնտեսություններում, ինչպես նաև ընդգրկվել «Մակաբուծաբանություն» առարկաի ուսումնական ծրագրում:

Դրական գնահատելով Ռ.Է. Բարսեղյանի թեկնածուական ատենախոսությունը հարկ ենք համարում կատարել հետևյալ դիտողությունները.

1. Էջ42. «2017-2018թթ. կատարված ուսումնասիրությունների ժամանակ Հայաստանի լեռնային գոտում 6 ամսական և ավելի բարձր տարիք ունեցող հետազոտված ճագարների մասնաբաժինը գարնանից աշուն նվազել է, իսկ ձմռանը՝ աճել» - ինչպես հասկանալ, չէ որ ընտրությունը կատարել եք Դուք և Դուք եք որոշել որքան ճագար հետազոտել, ինչ կապ կա այստեղ եղանակի հետ.
2. Էջ.43 Աղյուսակ 8. Ինչո՞վ եք բացատրում, որ հարթավայրային գոտում Ձեր ուսումնասիրված ճագարների մոտ ամռանը մինչև 3-ամսեկան կենդանիների մոտ, իսկ աշնանը և ձմռանը 3-6 ամսական ճագարների մոտ վարակվածություն չի հայտնաբերվել, մինչդեռ և գարնանը և ամռանը վարակվածության էքստենսիվությունը կազմել էր 100%.
3. Էջ 83. Սեփական հետազոտության 4-րդ գլխի 4.3 Կերի դերը էյմերիոզի հարուցիչներով վարակվածության ժամանակ ենթագլխում բերված են մեծ մասամբ (8 էջ) գրական տվյալներ, մինչդեռ այդտեղ պետք է բերվեն Ձեր կողմից ստացված տվյալները, իսկ այդպիսի մանրամասնությունները պետք է նշվեն գրականության ակնարկում

Ե Ձ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ամփոփելով վերը շարադրվածը, անհրաժեշտ է ընդգծել, որ Ռ.Է. Բարսեղյանի թեկնածուական ատենախոսության թեման արդիական է, իսկ ստացված տվյալները հավաստի են:

Այսպիսով, Ռոզա Էդիկի Բարսեղյանի «Ճագարների էյմերիոզի հարուցիչների բազմազանությունը և համաճարակաբանությունը Հայաստանում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ավարտուն աշխատանք է: Այն արդիականությամբ, գիտական նորոյթով, տեսական և գործնական նշանակությամբ, փաստացի նյութի ծավալով, կիրառված մեթոդներով լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին

ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԷՆ Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի գիտական խորհրդի 2024թ. հունվարի 10-ի նիստում, արձանագրություն թիվ 1: Գիտ.խորհրդի նիստին ներկա էին կ.գ.թ. Տ.Հ.Մարկոսյանը/նախագահ/, ան.գ.թ. Վ.Լ.Հակոբյանը /գիտ.քարտուղար/,գ.գ.դ. Հ.Լ.Թերլեմեզյանը, կ.գ.դ. Մ.Ա.Սարգսյանը, գ.գ.դ.Լ.Մ.Մինասյանը, ան.գ.թ. Խ.Վ.Սարգսյանը,ան.գ.թ. Յու.Ա.Շիրվանյանը, ան.գ.թ.Ս.Ա.Խառատյանը, ան.գ.թ. Հ.Ե.Ոսկանյանը, ան.գ.թ.Լ.Լ.Սիմոնյանը:

ՀՀ ԷՆ Սննդամթերքի անվտանգության ոլորտի
ռիսկերիգնահատման և վերլուծության
գիտական կենտրոնի ավագ գիտ.աշխատող,
ան.գ.դ.

Խ.Վ.Սարգսյան

ՀՀ ԷՆ Սննդամթերքի անվտանգության ոլորտի
ռիսկերիգնահատման և վերլուծության
գիտական կենտրոնիգիտ.քարտուղար,
ան.գ.թ.

Վ.Լ. Հակոբյան

« Խ.Վ.Սարգսյանի և Վ. Լ. Հակոբյանի ստորագրությունները հաստատում եմ»՝

ՀՀ ԷՆ Սննդամթերքի անվտանգության ոլորտի
ռիսկերիգնահատման և վերլուծության
գիտական կենտրոնի տնօրեն,
կ.գ.թ.

Տ.Հ.Մարկոսյան

